ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2022թ. № 531

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-052-0058-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,165 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ N 1429764 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06052BLNGWEZ) և Անաստաս Հմայակի Ասլանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Անաստաս Հմայակի Ասլանյանին (ծնված 17.04.1955 թվականին), Մելանյա Հովհաննեսի Ասլանյանին (ծնված 09.01.1960 թվականին), Նաիրա Անաստասի Ասլանյանին (ծնված 26.11.1979 թվականին), Կարինե Անաստասի Ասլանյանին (ծնված 17.08.1981 թվականին) և Ազատ Անաստասի Ասլանյանին (ծնված 02.07.1985 թվականին) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 06-052-0058-0011 կադաստրային ծածկագրով 0,165 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 102 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը և 32 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակին տրամադրել «Սպիտակ, գյուղ Կաթնաջուր, 1-ին փողոց, 6-րդ փակուղի, 2 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1815):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2022թ. № 532

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-042-0025-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,141 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով, ըստ ժառանգության իրավունքի 2022 թվականի ապրիլի 6-ի վկայագիրը (գրանցված սեղանամատյան N817) Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06042TFZQ7NK) և Թերմինա Գուրգենի Չախալյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թերմինա Գուրգենի Չախալյանին (ծնված՝ 07.12.1974 թվականին) ժառանգաբար փոխանցված՝ 06-042-0025-0014 կադաստրային ծածկագրով 0.141 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Լեռնավան, 36-րդ փողոց 25 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1811):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2022թ. № 533

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-042-0027-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,104416 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով, որ Լեռնավան բնակավայրում գտնվող 06-042-0027-0016 կադաստրային ծածկագրով 0,104416 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի տունը և անասնաշենքը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2022 թվականի ապրիլի 6-ի վկայագրով (գրանցված է սեղանամատյանում N 817) փոխանցվել է Թերմինա Գուրգենի Չախալյանին, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 060429VFXGJC) և Թերմինա Գուրգենի Չախալյանի դիմումը՝

որոշում եմ.

1. Թերմինա Գուրգենի Չախալյանին (ծնված՝ 07.12.1974 թվականին) ժառանգաբար փոխանցված՝ Լեռնավան բնակավայրում գտնվող 06-042-0027-0016 կադաստրային ծածկագրով 0,104416 հեկտար մակերեսով հողամասին դրա վրա գտնվող 126,6 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը և 84,5 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքին տրամադրել «Սպիտակ համայնք գ. Լեռնավան, 9-րդ փողոց, 17 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1811):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2022թ. № 534

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-042-0031-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,097 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով, ըստ ժառանգության իրավունքի 2022 թվականի ապրիլի 6-ի վկայագիրը (գրանցված սեղանամատյան N817) Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06042TLZTLUC) և Թերմինա Գուրգենի Չախալյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թերմինա Գուրգենի Չախալյանին (ծնված՝ 07.12.1974 թվականին) ժառանգաբար փոխանցված՝ 06-042-0031-0003 կադաստրային ծածկագրով 0.097 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Լեռնավան, 1-ին փողոց, 6-րդ փակուղի, 9 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1811):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2022թ. № 535

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՆՐԱԳՈՐԾՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍ, ԹԻՎ 250 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԿՐՏԻՉ ՌՈՒԲԻԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ԹԻՎ 420 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ և 10-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշմամբ, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11082021-06-0050 վկայականը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2022 թվականի հունիսի 10-ի թիվ 01/111.6/05152-2022 գրությունը և Մկրտիչ Ռուբիկի Թովմասյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մկրտիչ Ռուբիկի Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի «Պանրագործների թաղամաս, թիվ 250» հասցեում գտնվող, 06-006-0053-0003 կադաստրային ծածկագրով 0,0874 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վրա գտնվող 89,1 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական գործառնական նշանակության՝ որպես գրասենյակ, 46,2 քառակուսի մետր մակերեսով շինության գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական գործառնական նշանակության՝ որպես գրասենյակ, 32,2 քառակուսի մետր մակերեսով շինության գործառնական նշանակությունը փոփոխել որպես պահեստ:

3. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունները ենթակա են պետական գրանցման:

4. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 13-ի «Սպիտակ համայնքի Պանրագործների թաղամաս, թիվ 250 հասցեում գտնվող, Մկրտիչ Ռուբիկի Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի դրա վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների գործառնական նշանակությունը փոխելու մասին» թիվ 420 որոշումը:

5" Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2022թ. № 536

ԱՐՄԱՆ ԱՓՈՒՋԱՆՅԱՆԻՆ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՅԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածով, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 8-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 962-Ն որոշման հավելվածի 4-րդ և 5-րդ կետերով, հաշվի առնելով, որ անչափահաս Արման Ափուջանյանը (ծնված 09.07.2022թ.) մնացել է առանց ծնողական խնամքի՝ ***որոշում եմ.***

1.Արման Ափուջանյանին (ծնված 09.07.2022թ.) վերցնել սկզբնական հաշվառման՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխայի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 14
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2022թ. № 537

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրի բնակիչ Ալվարդ Համբարի Համբարյանը 2022 թվականի հունիսի 23-ին դիմել է Սպիտակ համայնքի ղեկավարին՝ խնդրելով ընդունել որոշում թիվ ՎԴ/8161/05/20 վարչական գործով հրապարակված վճռով հաստատված Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի ոչ իրավաչափ անգործության արդյունքում պատճառված 3 000 000 ՀՀ դրամ հատուցելու մասին և գումարը վճարել Ալվարդ Համբարյանին որպես վարչարարությամբ պատճառված վնաս:

Թիվ ՎԴ/8161/05/20 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2021 թվականի հուլիսի 2-ի վճռով ոչ իրավաչափ է ճանաչվել ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի կողմից աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների ցուցակում Ալվարդ Համբարյանի ընտանիքը հաշվառման չվերցնելու և ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիների ցուցակում Ալվարդ Համբարյանի ընտանիքը չհաշվառելու գործողությունը (անգործությունը):

Ի կատարումն թիվ ՎԴ/8161/05/20 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2021 թվականի հուլիսի 2-ի վճռի՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 46 որոշմամբ Ալվարդ Համբարի Համբարյանի ընտանիքը ընդգրկվել է Լոռու մարզի Արևաշող համայնքի պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում:

Ալվարդ Համբարի Համբարյանի բնակարանային հաշվառման փաստաթղթերն ուղարկվել են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե, ինչը հաստատվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի փետրվարի 28-ի թիվ 01/13/1808-2022 գրությամբ:

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի փետրվարի 28-ի թիվ 01/13/1808-2022 գրության բովանդակության վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի դիրքորոշմամբ Ալվարդ Համբարի Համբարյանին պատճառված վնասի հատուցումը պետք է կատարվի համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ հոդվածով սահմանված է.

«1. Վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ սույն բաժնի դրույթներին համապատասխան:

2. Ոչ իրավաչափ վարչարարության, իսկ սույն բաժնով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է՝

ա) Հայաստանի Հանրապետությունը՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերում նշված վարչական մարմինների դեպքում.

բ) համապատասխան համայնքը՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետում նշված վարչական մարմինների դեպքում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետով նախատեսված դեպքում վնասի հատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, իսկ «բ» կետով նախատեսված դեպքում՝ համապատասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

4. Սույն օրենքի 106-108-րդ հոդվածներով և 109-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում բաց թողնված օգուտը ենթակա չէ հատուցման»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 97-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցումն իրականացվում է վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու կամ դրամական միջոցներով հատուցելու եղանակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է, ապա պատասխանատվություն

կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով:

Նշված կանոնը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ պատասխանատվություն կրողի վարչարարության հետևանքով առաջացած դրությունը, օրենքի կամ այլ իրավական ակտի ընդունման կամ փոփոխման ուժով, ոչ իրավաչափ է դառնում հետագայում, և այդ դրության հետևանքները կարող են վերագրվել տվյալ պատասխանատվությունը կրողին և ենթակա չեն վերացման այլ կարգով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը:

Սույն վարչական վարույթի գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրությունից և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ, 97-րդ, 98-րդ և 99-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 46 որոշմամբ Ալվարդ Համբարի Համբարյանին պատճառված վնասի հետևանքները վերացված են, և Ալվարդ Համբարի Համբարյանի ընտանիքի իրավունքները վերականգնված են, հետևաբար Ալվարդ Համբարի Համբարյանի ընտանիքին պատճառված վնասը դրամական միջոցներով հատուցման ենթակա չէ:

Ալվարդ Համբարի Համբարյանի ընտանիքին պատճառված վնասը դրամական միջոցներով հատուցման ենթակա կլիներ այն պարագայում, երբ համայնքի ղեկավարը Ալվարդ Համբարի Համբարյանի ընտանիքին չընդգրկեր ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիների ցուցակում, և հնարավոր կամ բավարար չէր լինի Ալվարդ Համբարի Համբարյանի ընտանիքին ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիների ցուցակում ընդգրկելը կամ դրա համար կպահանջվեին ավելի մեծ ծախսեր քան պատճառված վնասը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով և 55-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Ալվարդ Համբարի Համբարյանի 2022 թվականի հունիսի 23-ի՝ թիվ ՎԴ/8161/05/20 վարչական գործով հրապարակված վճռով հաստատված Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի ոչ իրավաչափ անգործության արդյունքում պատճառված 3 000 000 ՀՀ դրամ հատուցելու մասին որոշում ընդունելու և գումարը Ալվարդ Համբարյանին որպես վարչարարությամբ պատճառված վնաս վճարելու մասին դիմումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալվարդ Համբարի Համբարյանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում վարչական կարգով Սպիտակ համայնքի ղեկավարին, կամ՝ դատական կարգ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2022թ. № 538

«ԲՈՒՅԼ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 87,6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍՊԱՍԱՍՐԱՀԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 06-006-0431-0024-002 կադաստրային ծածկագրով սպասասրահը օգտագործվում է որպես խանութ, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18112021-06-0044 վկայականը և «ԲՈՒՅԼ» ՍՊԸ-ի տնօրեն Աշոտ Գերասիմի Աջամյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «ԲՈՒՅԼ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի «Մարզ Լոռի,համայնք Սպիտակ ք. Շիրակի խճուղի 156 Ա.Գ.Լ.Ճ.Կ» հասցեում գտնվող, 06-006-0431-0024 կադաստրային ծածկագրով 0,302 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 06-006-0431-0024-002 կադաստրային ծածկագրով սպասասրահի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական ՝ որպես խանութ:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2022թ. № 539

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՀԱՐԹԱԿԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԵՔՍԱՆ ՎԱՉԻԿԻ ՄԱԹՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով, որ Ալեքսան Վաչիկի Մաթոսյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող, 06-006-0132-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի չափը կազմում է 0,026414 հեկտար, որը Ալեքսան Մաթոսյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, նշված հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1989 թվականին կառուցված բնակելի տունը և հարթակը, 2018 թվականին կառուցված պարիսպը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «Արսեն Իսահակյան Ռուդիկ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը,

Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022B3X4LH, Կադաստրի կոմիտեի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006RCFMPSH) և Ալեքսան Վաչիկի Մաթոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Ալեքսան Մաթոսյանի (ծնված 20.02.1957թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող, 06-006-0132-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,026414 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա կառուցված 91,45 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան և 6,09 քառակուսի մետր մակերեսով հարթակի նկատմամբ:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի ճշգրտված հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ, Շահումյան փողոց, 256 բնակելի տուն» հասցեն:

4. Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

5. Ալեքսան Վաչիկի Մաթոսյանին՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմել Սպիտակի համայնքապետարան սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վրա ինքնակամ կառուցված 6,02 քառակուսի մետր մակերեսով պարիսպն օրինականացնելու գործընթաց սկսելու նպատակով:

6. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 19-ի «Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող բնակելի տան, հարթակի և հողամասի նկատմամբ Ալեքսան Վաչիկի Մաթոսյանի սեփականության իրավունքը վերականգնելու, ինքնակամ կառույցները օրինականացնելու, հողամասի ճշգրտված հատակագիծը հաստատելու և անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 354 և 2022 թվականի հունիսի 24-ի «Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 19-ի թիվ 354 որոշումը նոր խմբագրությամբ շարադրելու մասին» թիվ 459 որոշումները:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գայանե Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2022թ. № 540

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-046-0654-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՎ 06-046-0020-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05112021-06-0031 և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30052022-06-0042 վկայականները, Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06046RFNF7PY)՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրի 1-ին փողոցի վրա գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-046-0654-0002 կադաստրային ծածկագրով 0,324246 հեկտար մակերեսով և 06-046-0020-0019 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,317 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերը:

2. Սույն որոշման 1-ին կետով միավորված հողամասին տրամադրել «Սպիտակ գյուղ Լուսաղբյուր, 1-ին փողոց, 22-23 հողամաս» հասցեն:

3. Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» հուլիսի 2022թ. № 541

ԾԱՂԻԿՆԵՐ ԵՎ ԾԱՂԿԵՊՍԱԿ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, Սպիտակ քաղաքի օրը Արցախյան 44-օրյա պատերազմի զոհերի և Սպիտակ քաղաքի նախկին քաղաքապետ, ԱԺ նախկին պատգամավոր, վաղամեռիկ Սուրեն Ավետիսյանի շիրիմներին հարգանքի տուրք մատուցելու նպատակով ծաղիկներ և ծաղկեպսակ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 31 600 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 15
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» հուլիսի 2022 թվականի N 542

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգի 8.4-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի՝

1) առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-1),
2) առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-2),
3) առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-3),
4) առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-4),
5 առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-5),
6) առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-6),
7) առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-7),
8) առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-8),
9) 1-ին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.2-1),

համայնքային ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար 2022 թվականի հուլիսի 19-ին անցկացվող մրցույթների՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Թումանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հուլիսի 18
ք.Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2022թ. հուլիսի ____-ի թիվ ____ որոշման

ԿԱԶՄ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

h/h	անունը, ազգանունը	հաստատությունը (մարմինը)	պաշտոնը
1	Նունիկ Ասրյան	ՀՀ Լոռու մարզպետարան	ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
2	Վարդան Հովհաննիսյան	ՀՀ Լոռու մարզպետարան	ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍԳ համակարգման բաժնի պետ
3	Արտակ Մաթոսյան	Սպիտակի համայնքապետարան	Սպիտակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
4	Վարուժան Ապրեսյան	Սպիտակի համայնքապետարան	Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար
5	Երանուհի Պողոսյան	«Սպիտակի Ս. Ավետիսյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ	ուսուցիչ
6	Հայկ Սիսակյան	Սպիտակ համայնքի ավագանի	Սպիտակ համայնքի ավագանու անդամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

18/07/2022 11:18:25 A
Կրտսեր պաշտոններ (ծածկագիր՝ խմբ-3_220719_1100)

Հանձնաժողովի կազմը

ՆՈՒՆԻԿ ԺՈՐԱՅԻ ԱՍՐՅԱՆ
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
Այլ տվյալներ՝ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԵՎԱԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԻ ԵՎ ՀԳՄՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԳՄՏՍԳ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԱՐՏԱԿ ՎԱՆԻՉԿԱՅԻ ՄԱԹՈՍՅԱՆ
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՎԱՐՈՒԺԱՆ ԼԵՎՈՆԻ ԱՊՐԵՍՅԱՆ
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ԳՆՈՒՄՆԵՐԻ, ԳՈՎԱԶԴԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀԱՅԿ ԶԱՔԱՐԻ ՍԻՍԱԿՅԱՆ
Հաստատությունը՝ Ավագանի
Պաշտոնը՝ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ԵՐԱՆՈՒՀԻ ԱԼԲԵՐՏԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Հաստատությունը՝ Գիտական հաստատություններ
Պաշտոնը՝ «ՍՊԻՏԱԿԻ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ, ՈՒՍՈՒՑԻՉ
Այլ տվյալներ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺ